**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ**

**ՄԱՐԶՊԵՏ**

<<28>> << նոյեմբեր>> 2016 թ N 132
ք. Եղեգնաձոր

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 96-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Համլետ Հարությունյանի հետ կնքած 2011 թվականի նոյեմբերի 29-ի N199 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ**

1. 2016 թվականի նոյեմբերի 29-ից Համլետ Հարությունյանին ազատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Վերնաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ կնքած 2011 թվականի նոյեմբերի 29-ի N199 աշխատանքային պայմանագիրը:
2. 2016 թվականի նոյեմբերի 29-ից Համլետ Հարությունյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի <<Վերնաշենի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքելով ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ